

ՆԱՐԵԿ ՎԱՆ ԱՇՈՒՂԱԹՈՅԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՍՐԲՈՅ ՅԱՆՈՐԵԱՆՅ ՎԱՆՔԻՆ 1818 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ՎԱՐԱԳՈՅՐԻ ՄԱՍԻՆ

Նայոց եկեղեցում կիրառուած վարագոյրների պատկերագրութիւնը, դրանց վերաբերեալ տարաբնոյթ պատմութիւնները մեզ լայն հնարաւորութիւններ են ընձեռում ուսումնասիրելու այնպիսի նիւթեր, որոնք կարող են բացայայտել հայութեան հոգեւոր եւ աշխարհիկ կեանքին առնչուող մի շարք ստուերուած էջեր: Այդպիսի մի իւրօրինակ վարագոյր այսօր պահուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանում: Հայոց եկեղեցում, թէեւ վարագոյրները չեն ունեցել միատարր, կանոնիկ պատկերագրութիւն, սակայն ստեղծուել են կրօնական որոշակի տրամաբանութեամբ¹, որը հաւատացեալին օգնել է աւելի պատկերաւոր ընկալել աստուածաշնչեան կամ եկեղեցու սրբազան աւանդութեան դրուագները: Երուսաղէմի մեր յիշատակած վարագոյրն այն բացառիկ օրինակներից է, որի որոշ տարրեր աստուածաբանութեան համաբնագրում նրան դարձնում են իւրօրինակ: Բանն այն է, որ վարագոյրի կենտրոնական մասում պատկերուած է առեւտրական մի նաւ², բրիտանական *the Red Ensign* դրօշով³: Թէ ինչու է նուիրաբերողը որոշել իր ընծայի կենտրոնում պատկերել եկեղեցու հետ առաջին հայեացքից որեւէ առնչութիւն չունեցող նաւ ու նուիրել ամենասրբազան խորաններից մէկին, կփորձենք պարզաբանել յաջորդիւ:

Այդ վարագոյրին անդրադարձել է Զօն Քարսուէլը՝ աշխարհում գորգի եւ մանածագործութեան (տեքստիլի) ոլորտում յայտնի “Hali” պար-

¹ Այս կարծիքի հիմքում ընկած է աշխարհի տարբեր վայրերում պահպանուող շուրջ եօթ տասնեակ հայոց եկեղեցական վարագոյրների մեր համեմատական քննութիւնը:

² Արեւլահնդակական ընկերութեան առեւտրային նաւերը ռազմական նաւերի պէս ունեցել են հրանօթներ: Այդ մասին հաւելեալ տե՛ս RUTH RHYNAS BROWN, *Guns carried on East Indiamen, 1600–1800*, “The International Journal of Nautical Archaeology and Underwater Exploration”, (1990) 19.1, էջ 17–22:

³ Այս վարագոյրը համարում ենք բացառիկ, քանի որ նաւի պատկերագրութեամբ եւ նման չափի ալ վարագոյր չենք հանդիպել: Հարկ ենք համարում յաւելել, որ Երուսաղէմում պահպանուած է Հնդկաստանում պատրաստուած մէկ ալ վարագոյր եւս, որի վրայ առկայ են նաւերի պատկերներ, սակայն անհամեմատ աւելի փոքր չափով:

բերականում⁴։ Հեղինակը, ընդհանուր առումով անդրադառնալով վարագոյրի պատկերագրութեանը, կարծում է, որ նաև՝ այդ տեղում յայտնուելու պատճառը մնում է առեղծուածային⁵։ Չնայած ծագող հարցերին՝ վարագոյրի վրայ կայ երկու տողով հայերէն արձանագրութիւն, որի հաղորդած տեղեկութիւնները մեծապէս նպաստում են մեր հետազոտութիւններում որոշ հարցերի պարզաբանմանը։ Այդ արձանագրութեան մէջ մասնաւորապէս գրուած է.

ՆԿԱՐԵՑԱԻ ՎԱՐԱԳՈՅՐՍ Ի ՄԱԴՐԱՍ ԱՐԴԵԱՄԲԲ ԲԱՐԵՊԱՇՏ Պ(Ա)Ր(Ո) Ն ՄՈՎՍԷՍ ՅԱՐՈՒԹԻ(ԻՆԵԱՆ)ԻՆ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԾՆՈՂԱՅ ԻԻՐՈՑ ԶՈՐ ԸՆԾԱՅԵԱՅ ՍՐԲՈՅ ՏԱՃԱՐԻՍ / ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ ԶԵՌԱՄԲ ՍՐԲԱԶԱՆ ԳՐԻԳՈ(Ր) (ՎԱՐ) ԴԱՊԵՏԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ ՀՆԴԿԱՅ ՆՈՒԻՐԱԿԻ ՍՐԲՈՅ ՔԱՂԱՔԻՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՅԱՄԻ Տ(ԵԱՌ)Ն 1818.⁶։

Այս արձանագրութեան հիմնական տեղեկութիւնն այն է, որ վարագոյրի պատուիրատուն Մովսէս Յարութիւնեանն է։ Վարագոյրը պատրաստուել է Մադրասում՝ յատուկ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տաճարի համար եւ ընծայուել 1818 թուականին։ Մինչ քննարկելը, թէ ով էր պարոն Մովսէսը եւ թէ ինչ պատճառով էր նաևի պատկերով վարագոյր ընծայել Երուսաղէմի տաճարին, անդրադառնանք վարագոյրի պատկերագրութեան միւս դրուագներին։

Վարագոյրն ունի շատ տրամաբանուած պատկերագրութիւն։ Այլ կերպ ասած՝ պատահական դրուագներ եւ տարրեր նրանում գրեթէ չկան։ Շատ կարելի է գործառոյթ է կատարում ծաղկային հաստ եզրագօտին, որը, ընդհանուր համապատկերն ի մի բերելով, դարձնում է մէկ ամբողջութիւն։ Եզրագօտուց ներս՝ աջ եւ ձախ կողմերում, առկայ են երկու կիսասիւններ, որոնցով ընդհանուր պատկերը նմանում է խորանի⁷։ Եթէ նկարիչն իսկապէս սիւնների միջոցով ընդհանուր պատկերը տեղաւորել է խորանային տրամաբանութեան մէջ, ապա, ամենայն հաւանականութեամբ, ցանկացել է ցոյց տալ պատկերների երկրային եւ երկնային

⁴ J. CARSWELL, An Indian Altar Curtain, "Hali", The International Magazine of Fine Carpets and Textiles, Issue 46, August, 1989, p. 14–15, 55.

⁵ Անդ, էջ 14։

⁶ Սոյն արձանագրութեան ճշգրիտ վերծանման համար մեր շնորհակալութիւնն ենք յայտնում վիմագրագէտ, պ. գ. թ. Արսէն Յարութիւնեանին։

⁷ Ի դէպ, սիւններով նման նկարչական օրինակները բազմաթիւ են հայկական մանրանկարչութեան մէջ յայտնի որպէս խորաններ։ Խորանների մասին լրացուցիչ տես «Խորանների մեկնութիւններ», աշխ.՝ Վ. Ղազարեանի, Երեւան, 1995, էջ 5–29։

միաձուլումը մէկ հարթութեան մէջ: Խորանի ներկայութիւնը յիշեցնում է տաճար, իսկ քրիստոնէական տաճարը եկեղեցու որոշ հայրեր ներկայացնում են որպէս երկրայինի եւ երկնայինի միաձուլման հանգոյց: Ս. Գրիգոր Տաթեւացին իր «Զմեռան» հատորում գրում է. «Պարտ է գիտել՝ զի եկեղեցիս է կառուցեալ յօրինակ լուսեղէն երկնիցն...»⁸: Այսպիսով՝ վարագոյրի եզրագօտուց ներս գտնուող եւ իրար չկրկնող պատկերները, ամենայն հաւանականութեամբ, ստեղծուել են վերը նշուած «լուսեղէն երկնքի» եւ երկրայինի միաձուլման համապատկերում:

Վարագոյրի չորս կողմերում՝ ուղղանկիւն շրջանակի մէջ, առանձին-առանձին պատկերուած են չորս աւետարանիչները՝ իրենց անուան հայերէն արձանագրութիւններով, որոնք կարծես միաձուլում են աջ եւ ձախ կողմերում տեղակայուած կիսասիւններին: Վերելի ձախ անկիւնում պատկերուած է Ս. Մատթէոսը՝ իր հետ նոյնացուող հրեշտակակերպ մարդու հետ, ներքելի ձախում՝ Ս. Դուկասը՝ եզան (ցլի) հետ, աջ անկեան վերելում՝ Ս. Մարկոսը՝ առիւծի հետ, ներքելի աջում՝ Ս. Յովհաննէսը՝ արծուի հետ⁹: Աւետարանիչների պատկերների միաձուլումը կիսասիւնների հետ պատահականութիւն չէ. չորս աւետարանիչները դիտարկուում են որպէս Քրիստոսի Եկեղեցու չորս սիւներ, որոնց վրայ հենուում է գմբեթը՝ նոյն Ինքը՝ Յիսուս Քրիստոս՝ «ԶՈՐՍ ՍԻՒՆԵՐՆ են չորս Աւետարանիչները, բարձողք, վեր բռնող Երկնից արքայութիւնը, Եկեղեցւոյ Միութիւնը, սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան, զԲանն կենաց զոր Քրիստոս Տէրն քարոզեց եւ սորվեցուց»¹⁰: Այս խորհրդաբանութիւնն իր բազում դրսեւորումներն է ունեցել հայկական միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան մէջ¹¹:

⁸ Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ, Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 656:

⁹ Աւետարանիչների այս խորհրդանշանների համար հիմք են հանդիսացել աստուածաշնչեան հետեւեալ տողերը. «Եւ կերպարանք երեսաց նոցա՝ կերպարանք մարդոյ եւ կերպարանք առիւծու յաջմէ չորեցունց, եւ կերպարանք եզին եւ կերպարանք արծուոյ ի ձախմէ՝ չորեցունց» (Եզեկ. Ա. 10). «Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, եւ երկրորդ կենդանին՝ նման զուարակի, եւ երրորդ կենդանին ունէր երեսս մարդոյ, եւ չորրորդ կենդանին՝ նման արծուոյ թուցելոյ» (Յայտ. Գ. 7): Այս խորհրդաբանութեան վերաբերեալ տեսնաւ «Ante-Nicene Christian library»: translations of the writings of the Fathers down to A. D. 325, vol. V. «The writings of Irenaeus», vol. I, translated by A. Roberts & J. Donaldson, Edinburgh, 1867, էջ 293:

¹⁰ Գ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ, Քրիստոնէական ճարտարապետութիւն: Ո՛ւր է կեդրոնական գմբեթաւոր ճարտարապետութեան խանձարուրքն: Հետազոտութիւններ, Վենետիկ—Ս. Ղազար, 1930, էջ 343—344:

¹¹ Որպէս օրինակ կարելի է դիտարկել Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին, որի «գմբեթը կրում են չորս մուլթեր, որոնք խորհրդանշում են երկրի չորս կողմերը, չորս տարրերը, դրախտից սկսվող չորս գետերը, Աստծո տունը եւ հաստատութիւնը պահող

Այսպիսով՝ մեր համոզմամբ՝ Երուսաղէմի վարագոյրին առկայ սիւնների եւ աւետարանիչների պատկերների համադրական միաձուլումն այս նոյն խորհրդանշանային տրամաբանութեան շարունակութիւնն է:

Կիսասիւններից դէպի ներս ընկած հատուածում տեսնում ենք ձուածեւ շրջանակների մէջ առնուած կերպարային չորս պատկերներ¹² եւ իւրաքանչիւրի ստորին հատուածում՝ հայերէն արձանագրութեամբ ժապաւէններ: Ձախ կողմի վերեւի հատուածում պատկերուած է յարութիւն առնող Քրիստոսը՝ ձեռքին մահուան նկատմամբ յաղթանակ խորհրդանշող խաչվառով¹³: Քրիստոսի շրջանակից ներքեւ պատկերուած է Ս. Յակոբոս Տեառնեղբայրը, աջ կողմի վերեւի հատուածում՝ Ս. Յակոբոս Գլխադիրը (Ձեբեդեան), իսկ նրանից ներքեւ՝ Ս. Նիկողայոսը: Քրիստոսի հետ Եկեղեցու միւս երեք հայրերի՝ մէկ հարթութեան մէջ պատկերմանը հայ պատկերագրութեան մէջ կարծես չենք հանդիպում: Հետեւաբար՝ հարց է ծագում. նկարչի կամ պատուիրատուի կողմից հայրերի այս ընտրութիւնը պատահականութիւն է, թէ՛ տրամաբանուած մօտեցում: Յիշենք վարագոյրի արձանագրութիւնը. նուէրը նպատակային պատրաստուել էր Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի համար, ինչը մեզ թոյլ է տալիս ենթադրել, որ նրանում եղած սրբերի պատկերներն ինչ-որ կերպ պէտք է կապ ունենային տուեալ սրբութեան հետ:

Իսկ ի՞նչ կապ ունեն Ս. Յակոբոս Տեառնեղբայրն ու Ս. Յակոբոս Գլխադիրը Երուսաղէմի տաճարի հետ: Ս. Յակոբոս Գլխադիրը Քրիստոսի տասներկու առաքեալներից էր, եւ Աստուածաշնչում նա մշտապէս յիշատակուում է իր եղբայր Յովհաննէսի հետ (Մատթ. Ժ. 3)¹⁴: Յակոբոսի գլխատման դրուագը նկարագրուած է «Գործք առաքելոց»-ում (Գործք ԺԲ. 1–2): Նա միակն է առաքեալների շարքում, որի մահը նկարագրուած է Սուրբ Գրքում: «Ըստ աւանդութեան՝ Յակոբոսի գլուխը բերուած է Յակոբոս Տեառնեղբայր Առաքեալին, որ Երուսաղէմի մայր եկեղեցիին առաջին եպիսկոպոսն էր, որ թաղած է այս պատուական գլուխը իր

չորս ավետարանիչները իրենց կենդանակերպ խորհրդանշան պատկերներով...». տէն Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ, *Խորհրդանշանային մտածողութիւնը հայ ճարտարապետութիւնում*, Երեւան, 2005, էջ 72:

¹² Հետաքրքրական է, որ Քրիստոսի պատկերն ու նրա շրջանակը որեւէ կերպ չեն առանձնանում միւս երեք պատկերներից: Մեզ հանդիպած միւս վարագոյրներում, որտեղ պատկերուած է Քրիստոսը, չենք նկատում որեւէ առանձնացող յատկանիշ՝ չափ, դիրք, շեշտուած գոյն եւ այլն:

¹³ G. FERGUSON, *Signs and Symbols in Christian Art*, Oxford, 1954, p. 304.

¹⁴ Հմմտ. Ղուկ. Զ .14, Գործք ԺԲ. 2:

տան պարտեզին մէջ: Այս տան տեղն է, որ կառուցուած է Երուսաղէմի մեր Սրբոց Յակոբեանց մայր տաճարը, որում հիւսիսային պատի մէջ բացուած փոքր մատրան մը մէջ կը ցուցուի իր գլխին գերեզմանը, այսինքն՝ ԳլխԱԴԻՐը, իբրեւ մակդիր գործածուած է ժողովրդային խաւերու մէջ այս Առաքեալին համար»¹⁵: Ինչ վերաբերում է Ս. Յակոբոս Տեառնեղբորը, ապա նա Աստուածաշնչում յիշատակում է որպէս եկեղեցական կարեւոր գործիչ՝ յատկապէս Երուսաղէմի առաքելական ժողովի համապատկերում (Գործք ԺԵ.): Ինչպէս արդէն յիշատակուեց, ըստ աւանդութեան, նա համարում է Երուսաղէմի մայր եկեղեցու անդրանիկ եպիսկոպոսը: «Այս Յակոբոսին յիշատակն ալ, Զբեգեան Յակոբոսին պէս, սերտօրէն կապուած է մեր եկեղեցիին հետ: Նահատակութենէն յետոյ իր մարմինը բերուած ու թաղուած է իր տան պարտեզին մէջը, ուր թաղուած էր նաեւ Յակոբոս առաքեալի գլուխը: Այս տան տեղւոյն վրայ շինուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մայր տաճարը, որ այս իսկ պատճառով կը կոչուի «Սրբոց Յակոբեանց Տաճար», այսինքն՝ «Սուրբ Յակոբներու Եկեղեցին»»¹⁶: Մաղաքիա արք. Օրմանեանը գրում է. «Վանքը Ս. Յակոբեանք կը կոչուի, Տեառնեղբայր եւ Գլխադիր Յակոբ առաքեալներու անունին միանգամայն նուիրուած ըլլալուն համար»¹⁷: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ մեր վարագոյրի վրայ պատկերուած երկու Յակոբոսներն ուղիղ կապ ունեն վարագոյրի նուիրատութեան վայրի՝ Երուսաղէմի տաճարի հետ:

Ի տարբերութիւն երկու Յակոբոսների¹⁸, որոնց կապը Երուսաղէմի հայոց վանքի հետ ականյայտ է՝ Ս. Նիկողայոսի պարագայում նման աւանդութիւն չկայ: Սակայն կայ մի հետաքրքիր պատմութիւն, որն ամբողջութեամբ լոյս է սփռում նրա պատկերի ներառման պատճառի վրայ. Սուրբ Երկիր ուխտի գնալիս Ս. Նիկողայոսի նաւը ենթարկում է ալէկոծութեան, եւ սուրբն իր աղօթքով ծովը հանդարտեցնում է¹⁹: Այս հրաշագործութեան շնորհիւ Ս. Նիկողայոսը համարում է նաւաստիների, ճա-

¹⁵ ՇՆՈՐՀՔ ԱՐՔ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ, Աստուածաշնչական սուրբեր, Երեւան, 1997, էջ 175:

¹⁶ Անդ, էջ 204:

¹⁷ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ, 2136:

¹⁸ Ի դէպ, նկարիչը Ս. Նիկողայոսի եւ Ս. Յակոբոս Տեառնեղբոր զգեստները պատկերել է գրեթէ նոյն ձեւաւորմամբ, ինչը չենք ասի միւս կերպարային մեծ պատկերների մասին: Դա, հաւանաբար, պայմանաւորուած է եղել նրանով, որ երկու սրբերն ունեցել են եպիսկոպոսական աստիճան:

¹⁹ ՇՆՈՐՀՔ ԱՐՔ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ, նշ. աշխ., Երեւան, 1997, էջ 66:

նապարհորդների հովանաւոր սուրբը²⁰։ Ահա թէ ինչու է Ս. Նիկողայոսի պատկերը յայտնուել այս վարագոյրի վրայ, նուիրատուն՝ պարոն Մովսէսը, ամենայն հաւանականութեամբ, նաւագնացութեան հետ առնչութիւն ունեցող անձ է, որի մասին կիսօսենք քիչ աւելի ուշ։

Վարագոյրի կենտրոնական հատուածի աջ եւ ձախ մասերում՝ պայմանական երկնքում, պատկերուած են լուսատուներ՝ արեւ եւ լուսին։ Ընդհանուր պատկերում, բացի այս խորհրդանշաններից, գիշեր-ցերեկի գունային տարանջատում չենք տեսնում։ Երկու լուսատուների միաժամանակ ներկայութեանը հանդիպում ենք հայկական բազմաթիւ մանրանկարներում՝ յատկապէս խաչելութեան պատկերներում, որի հիմքը նորկտակարանեան այն դրուագն է, որտեղ կէսօրին ամբողջ երկրի վրայ խաւար է լինում (Մատթ. Իէ. 45)։ Սակայն զոյգ լուսատուների ներկայութիւնը մեկնաբանում է նաեւ աւելի լայն իմաստով. «Արեւն ու լուսինը խորհրդանշում են Յիսուսի գալիք դատաստանը եւ Աստուծոյ հաստատուն, անփոփոխ վիճակը (արեւ)՝ ի հակադրութիւն սատանայի (լուսին) փոփոխական անկատարութեանը»²¹։ Ս. Կղեմէս Հռոմէացին կորնթացիներին ուղղուած իր նամակում երկու լուսատուների համաժամանակեայ առկայութիւնը համեմատում է Ս. Յարութեան հետ. «Յերեկն ու գիշերը մեզ յարութիւնն են ներկայացնում, գիշերը քնում է, ցերեկն է յառնում, անցնում է ցերեկը, գալիս է գիշերը»²²։ Կարծում ենք, որ մեր խնդրոյ առարկայ վարագոյրում լուսատուների միաժամանակեայ պատկերումը եւս բխում է վերը ներկայացուած խորհրդաբանութիւններից։

Այսպիսով՝ եթէ վարագոյրի կերպարային եւ միւս պատկերներն ունեն նման փոխկապակցուած խորհրդաբանութիւն, ապա վարագոյրի կենտրոնում նկարուած հսկայ առագաստանաւը չի կարող պատահականութիւն լինել։

Այժմ քննարկենք նաւի՝ որպէս յօրինուածքի (կոմպոզիցիա) հիմնական բաղադրատարրի ընդգրկման նպատակները եւ դրա պատկերագրութիւնը։ Քարսուէլը կարծում է, որ պատկերուած նաւը բնորոշ է Արեւե-

²⁰ G. FERGUSON, նշ. աշխ., էջ 370։

²¹ Կ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա. ԱՌԵՏԻՍԵԱՆ, Աւետարանական պատկերներ, Երեւան, 1993, էջ 76։

²² «Կղեմէսի առաջին նամակը կորնթացիներին», թարգմ. Ս. Գրքաշարեանի, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Երեւան 1994, էջ 132։

լահնդկական ընկերությունների ներքոյ գործող նաւերին²³, որոնք գրեթէ չեն ենթարկուել փոփոխությունների ժե. դարից ի վեր եւ հիմնականում ծառայել են բեռնափոխադրումների համար: Թէեւ նկարիչը լրիւ ճշգրտութեամբ չի պատկերել նաւը²⁴, այդուհանդերձ նրա մի քանի բնութագրող տարրեր այն առավել քան ակնառու են դարձնում: Այդպիսի տարրերից են բրիտանական the red Ensign դրօշը, Գառն Աստծոյ խորհրդանիշը եւ նաւի առջեւում պատկերուած կերպարային պատկերը: Քարսուէլը նկատում է, որ վերջինս խորհրդանշել է Հերակլէսին, թէեւ ծանօթագրում է, որ այդ ժամանակ Արեւելահնդկական ընկերության նաւերն առջեւում տեղադրում էին նաեւ այլ առասպելական արձաններ²⁵: Հետազօտողն իր յօդուածում նշում է, որ պատկերուած դրօշը ներկայացուած է շրջուած, իսկ դա նշանակում է, որ նաւն ինչ-որ խնդիր է ունեցել, եւ գուցէ դա էլ եղել է այն պատճառը, որ նրա պատկերը յայտնուել է նման սրբազան վայրում: Հաւանաբար, պատուիրատուն այդպիսով ակնկալել է յիշատակի արձանագրում կամ օրհնութիւն՝ կեանքի եւ գործի ապահովութեան համար: Առհասարակ, նեղություն մէջ գտնուողի իրերը, նրա անուան յիշատակութիւնը կամ նեղուցեալի պատկերը սրբազան վայրում թողնելու երեւոյթը հայերի շրջանում խորն արմատներ ունի: Նման սրբազան վայր կարող էին դիտարկուել յատկապէս եկեղեցին, դրան կից ծառերը²⁶ եւ այլն: Այս կապակցութեամբ հնագէտ Համլէտ Պետրոսեանը նշում է. «Լոռիում եւ Տաւուշում մինչեւ վերջերս էլ հիւանդատէրերի պատուէրով դարբինները երկաթէ թիթեղից տղամարդու կամ կնոջ կերպարներ էին կտրում, որոնք հիւանդատէրերը տանում դնում էին խաչքարի պատուանդանին՝ յուսալով, որ «սուրբը» իր վրայ կվերցնի ցաւը»²⁷:

Իսկ ինչ կապ ունէր պատկերուած նաւը վարագոյրի նուիրատու Մովսէս Յարութիւնեանի հետ: Ինչպէս նշեցինք, նաւի վրայ պատկերուած է Գառն Աստուծոյ խորհրդանիշը: Նման խորհրդանիշով կամ այլ կերպ ասած՝ դրօշով, ներկայացել են հենց հայ վաճառականները: Այդպիսի մի քանի օրինակներ հանդիպում ենք Կ. Բալայեանի յօդուածներից մէ-

²³ Արեւելահնդկական ընկերության նաւերը կոչւում էին «East Indiaman», որոնց դրօշներն այդ ժամանակ ունեցել են որոշ տարբերութիւններ պատկերուած դրօշից:

²⁴ “Hali”, issue 46, p. 14.

²⁵ Անդ, էջ 14, 55:

²⁶ Ե. ԱՆԱՅԵԱՆ, Վարանդա. Հաւատք. Ծառերի պաշտամունք, «Ազգագրական հանդէս», Բ. գիրք, Թիֆլիս, 1897, էջ 198–204:

²⁷ Հ. Լ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, Խաչքար, Երեւան, 2015, էջ 264:

կոււմ²⁸: Առհասարակ, այն, որ հայ վաճառականների նաւերը հանդէս են եկել ինչ-որ իւրայատուկ դրօշով, իրողութիւն է, եւ այդ մասին յիշատակութիւններ կան տարբեր արխիւային փաստաթղթերում: Եւրոյի Բարսեղովը գրում է. «Հայ վաճառականների համար բացառութիւններ էին արւում. նրանց քրիստոնէական անուանումներով նաւերը Մանիլա էին մտնում հայկական դրօշի ներքոյ»²⁹: Ընդհանրապէս, հայերն առեւտրում յաջողակ էին, եւ այդ արտօնութիւնները գուցէ պայմանաւորուած էին հենց դրանով³⁰: Հայկական դրօշի վրայ Աստուծոյ գառան խորհրդանշը հայկական ծագում չունի. այն համաժամանակեայ օգտագործուել է ընդհանուր քրիստոնէայ աշխարհում՝ խորհրդանշելով Յիսուս Քրիստոսին³¹:

Այսպիսով՝ դատելով պատկերուածից՝ կարելի է ենթադրել, որ նաւն ինչ-որ առնչութիւն է ունեցել հայ վաճառականութեան հետ:

Ինչ վերաբերում է վարագոյրի նուիրատու պարոն Մովսէսին, կարծում ենք, որ նա, ամենայն հաւանականութեամբ, վաճառական էր: Ակնյայտ է, որ այդ ժամանակ միայն նիւթապէս ապահով եւ ազդեցիկ մարդիկ կարող էին նման արժէքաւոր վարագոյր պատրաստել եւ հասցնել Երուսաղէմի տաճար: «Քրիստիս» աճուրդի տան հրատարակած մի ցուցակում (կատալոգ), որտեղ խօսւում է Մադրասում պատրաստուած մէկ այլ վարագոյրի մասին, յիշատակւում է մեր խնդրոյ առարկայ վարագոյրը, իսկ նրա պատուիրատու Մովսէս Յարութիւնեանը ներկայացւում է որպէս վաճառական³², առանց սկզբնաղբիւրային յիշատակութեան³³: Համանման անուն հանդիպում է The Bengal Directory-ում, որտեղ 1824 թուա-

²⁸ K. BALAYAN, The Armenian flag in the Indian ocean in the 17th—18th centuries, “Fundamental Armenology”, №1 (3), 2016, p. 2, 3, 5.

²⁹ Ե. ԲԱՐՍԵՂՈՎ, Հայերը եւ համաշխարհային ծովային առեւտրը, Երեւան, 2018, էջ 19: Հայկական դրօշի մասին մէկ այլ յիշատակութիւն, տե՛ս անդ, էջ 63:

³⁰ Այս մասին լրացուցիչ մանրամասնութիւններ տե՛ս MESROV J. SETH, History of the Armenians in India from the earliest times to the present day, London, 1897:

³¹ Ս. Գրիգոր Տաթեւացիի գրում է. «Գառն այն ցուցանէ զՅիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ, որ գառն է Աստուծոյ Հօր». տե՛ս Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ, Գիրք քարոզութեան, որ կոչի Ջմեռան հատոր, էջ 481: Պատահական չէ, որ հայ իրականութեան մէջ այդ խորհրդանշը շատ ամուր արմատներ է ունեցել, եւ նրա տարբեր դրսեւորումները տեղ են գտել մեր կիրառական արուեստի եւ ազգային խորհրդանշների զանազան նմուշներում եւ օրինակներում: Այդպիսի օրինակներ տե՛ս Հ. ԴԵՄՈՅԵԱՆ, Հայկական ազգային խորհրդանշաններ, Երեւան, 2012, էջ 179, 190—191:

³² CHRISTIE'S, The Bernheimer family Collection of Textiles, London, 1996, p. 42.

³³ Նման մի այլ յիշատակութեան հանդիպում ենք նաեւ՝ R. H. KÉVORKIAN, B. ACHDJIAN, Tapis et Textiles Arméniens, Marseille, 1991, էջ 105:

կանի ներքոյ, ի շարս այլոց, գրուած է Aratoon, Moses անունը³⁴: Շատ հետաքրքիր փաստեր ենք հանդիպում անգլալեզու տպագիր մի այլ անուանացանկում. «Mr. Moses Aratoon, late of Batavia, merchant — Mr. Harrapiet Arratoon, of Calcutta, merchant, executor»³⁵: Կարծում ենք, որ այս երկու աղբիւրներում յիշատակուած Moses Aratoon անձը նոյն ինքը՝ վարագոյրի նուիրատու Մովսէս Յարութիւնեանն է: Այն հարցում, որ վարագոյրի արձանագրութեան մէջ եւ այս անուանացանկերում նշուած անունը վերաբերում է նոյն անձին, գրեթէ համոզուած ենք: Նման համոզման եկել ենք՝ հաշուի առնելով երկու հանգամանք. այս անուն-ազգանունը մեր ուսումնասիրած ոչ մի այլ յիշատակութիւնում չենք հանդիպում, եւ անուանացանկերում Moses Aratoon անունը գրանցուած է 1824 թուականի ներքոյ: Յիշենք, որ մեր քննարկած վարագոյրը նուիրաբերուել է 1818 թուականին, որը ժամանակամերձ է 1824 թուականին:

Այսպիսով՝ արձանագրում ենք, որ վարագոյրի նուիրատու Մովսէս Յարութիւնեանը, ամենայն հաւանականութեամբ, վաճառական էր եւ առնչութիւն է ունեցել ինչ-որ Բաթաւիայի հետ, քանի որ աղբիւրներից մէկում, ինչպէս նկատեցինք, նշուած է late of³⁶ Batavia արտայայտութիւնը: Իսկ ի՞նչ է Բաթաւիան: Ենթադրում ենք, որ դա հենց այն նաւի անունն է, որը պատկերուած է վարագոյրի վրայ³⁷: Արեւելահնդկական ընկերութեանը վերաբերող արխիւային վաւերագրերը հաստատում են, որ առեւտրային այդ կազմակերպութեան ներքոյ գործել է Բաթաւիա³⁸ անունով նաւ³⁹:

³⁴ “The New Annual Bengal Directory and General Register for the year”, 1824, p. 621.

³⁵ “The Quarterly Oriental Magazine: Review and Register”, vol. 1, March & June, 1824, Calcutta, p. cxix. «Պարոն Մովսէս Յարութիւն, բնակութեան կամ գործունէութեան վերջին վայրը (կառուցը)՝ Բաթաւիա, վաճառական — պարոն Հայրապետ Յարութիւն՝ Կալկաթայից, վաճառական, կտակակատար»:

³⁶ Անգլերէնում Late of արտայայտութիւնն օգտագործում է երկակի իմաստով՝ որպէս անձի վերջին բնակութեան վայր կամ վերջին աշխատավայր, գործունէութեան վայր (կառուց, ընկերութիւն):

³⁷ Վերը նշուեց, որ late of Batavia արտայայտութիւնը կարող էր նշանակել նաեւ տեղանուն, այսինքն՝ անձի վերջին բնակութեան վայրը: Քանի որ մեր աղբիւրում չի յստակեցւում՝ Բաթաւիան բնակութեան վայր է, թէ անձի գործունէութեան անուանում, կարծում ենք, որ այն նաւի՝ որպէս գործունէութեան վայրի (կառուցի) անունն է: Այդ կարծիքի ձեւաւորմանն օգնում են որոշ լրացուցիչ տուեալներ, որոնք քննարկուած են սոյն յօդուածում:

³⁸ Batavia (1802) նաւը չշփոթել Dutch East India Company-ին պատկանող Batavia (1628) նաւի հետ:

³⁹ http://searcharchives.bl.uk/IAMS_VU2:IAMS045—001114599

Ինչպէս նշեցինք, վարագոյրի պատկերում նաւի բրիտանական դրօշը պատկերուած էր շրջուած, որը խորհրդանշում էր տազնապի ահազանգ: Եւ եթէ ստոյգ է մեր ենթադրութիւնը, որ պատկերուած նաւը հենց Բաթաւիան է, ապա հարց է ծագում՝ ինչ էր պատահել նաւի հետ, եւ ինչու էր պարոն Մովսէսը դրա պատկերը հասցրել Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց սրբազան խորան: Բաթաւիայի սեփականատէրերի եւ նաւապետների ցանկում «Մովսէս Յարութիւնեան» անունը չենք հանդիպում⁴⁰: Այս պահին կարելի է ենթադրել միայն, որ պարոն Մովսէսը գուցէ օգտուել (վարձակալել) է նաւից՝ իր առեւտուրը կազմակերպելու համար: Նաւը շահագործումից վերջնական հանուել է 1819 թուականին՝ վարագոյրի ընծայաբերումից մէկ տարի անց: 1817 թուականին աւարտուել է նաւի երրորդ նաւարկութիւնը, եւ այդ նոյն թուականին այն յիշատակում է որպէս նաւարկութեան համար ոչ պիտանի⁴¹ (unseaworthy): Ենթադրելի է, որ նաւի հետ ինչ-որ վատ բան է պատահել⁴², որի պատճառով, հաւանաբար, տուժել է նաեւ պարոն Մովսէսը:

Այս պատմութեան համապատկերում մեզ համար յատուկ հետաքրքրութիւն ունի այն հարցը, թէ ինչու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնն ընդունեց այս տարօրինակ պատկերով նուէրը: Այն, որ նուէրն ընդունուել է, կասկածից վեր է, քանի որ արձանագրութեան մէջ առանձին յիշատակուած է նաեւ հոգեւորական նուիրակի անունը, որի միջոցով այն փոխանցուել է, բացի այդ՝ վարագոյրն ունի վնասուած եւ վերանորոգուած որոշ հատուածներ, ինչը վկայում է, որ այն օգտագործուել է⁴³: Կարծում ենք, որ այս վարագոյրն ընդունուել է նման պատկերագրութեամբ, քանի որ եկեղեցին նրանում եղած մեծ նաւը, բացի իր գործառնութից, նախեաւառաջ ընկալել է որպէս քրիստոնէական կարեւոր խորհրդանշան: Քրիստոնէութեան մէջ նաւն ընկալում է որպէս եկեղեցի⁴⁴, փրկութեան տանող նոր տապան: Պատահական չէ, որ Մեսրոպ Մաշտոցի հե-

⁴⁰ Ապագայում անհրաժեշտ կը լինի ուսումնասիրել Բրիտանական գրադարանում պահուող Բաթաւիայի գրանցամատեանները:

⁴¹ R. HACKMAN, Ships of the East India Company. World Ship Society, 2001, p. 65.

⁴² Այնուամենայնիւ, արեւելահնդկական ընկերութեան խորտակուած նաւերի ցանկում Բաթաւիան առկայ չէ: Տէս <https://www.nauticalarchaeologysociety.org/east-india-company-incidents>

⁴³ Ի դէպ, վարագոյրն օգտագործուել է Խրաքանչիւր տարի Մեծ պահքի Զ. շաբաթուայ ընթացքում: Այս մասին տե՛ս ԲԱՐՍԵՂ ՎՐԻ. ԳԱԼԵՍԷՐԵԱՆ, Յիշատակարանք սպասուց Սրբոց Յակոբեանց մայր տաճարի, Երուսաղէմ, 2008, էջ 54:

⁴⁴ Այդ մասին յիշատակում կայ նաեւ Բրիտանիկա հանրագիտարանում, որտեղ Nave ճարտարապետական եզրոյթը կապում է նաւի հետ, որը քննարկում է որպէս եկեղեցու խորհրդանշան: Տէս <https://www.britannica.com/topic/nave>

ղինակած շարականներից մէկում գրուած է. «Մով կենցաղոյս հանապազ զիս ալէկոծէ: Մըրըրկեալ ալիք թըշնամին ինձ յարուցանէ: Նաւապետ բարի, լէր անձին իմոյ ապաւէն»⁴⁵: Աստծուն՝ որպէս Նաւապետի, հանդիպում ենք նաեւ «Մատեան ողբերգութեան» երկում, որտեղ Ս. Գրիգոր Նարեկացին Տիրոջը կրկին դիմում է որպէս «Բարի Նաւապետ»-ի⁴⁶: Մէկ այլ՝ աւելի ամբողջական ձեւակերպում տեսնում ենք 1679 թուականին գրուած մի Տօնապատճառում՝ «Նաւ է եկեղեցի, նաւապետ՝ Հայր, նաւավար՝ Որդի, նաւահանգիստ՝ Սուրբ Հոգին...»⁴⁷: Այս համապատկերում բաւականին ուշագրաւ է մի յիշատակութիւն, որը ցոյց է տալիս, թէ որքան է Հայոց եկեղեցին ժամանակին արժեւորել նաւի գործօնը հայութեան կեանքում: Հայր Արիշանն իր «Սիսուան» աշխատութեան մէջ խօսում է մի Մաշտոց ծիսագրքի մասին, որում, փաստօրէն, եղել է նաւօրհնաց կանոն՝ «որպէս վայել էր ունել զայն՝ բնակելոցն ի ծովեզերս Միջերկրականի»⁴⁸: Հարց է ծագում. եթէ կարող էր նաւի համար սահմանուել օրհնութեան յատուկ ծիսակարգ, ինչո՞ւ չէր կարող վերջինիս պատկերը ներառուել եկեղեցական պատկերազրութիւնում՝ իր համապատասխան խորհրդաբանութեամբ եւ վերը քննարկուած նպատակով: Ի շարս ներկայացուած պատճառների՝ մէկ ուրիշ հանգամանք եւս կարող էր նուէրի ընդունման առիթ լինել: Բանն այն է, որ առեւտրային այդ նաւերը Հայոց եկեղեցու, յատկապէս՝ Նոր Զուղայի, Երուսաղէմի, Էջմիածնի եւ այլ խոշոր հայկական կենտրոնների համար ունէին շատ կարեւոր անուղղակի նշանակութիւն: Այլ կերպ ասած՝ դրանց միջոցով էր ձեւաւորում հայ վաճառականների հիմնական նիւթական կարողութիւնը, իսկ այն ծառայեցում էր նաեւ Հայոց եկեղեցու պայծառութեանը⁴⁹: Հետեւաբար՝ հայ վաճառականների դրամագլխի կորուստը Հայոց եկեղեցու համար կարող էր ընկալուել որպէս բացասական երեւոյթ: Ուստի այս համապատկերում

⁴⁵ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ, ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ, Օրհներգեր, Երեւան, 2010, էջ 40:

⁴⁶ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, Մատեան ողբերգութեան, բան ԻԵ., գ., աշխ.՝ Պ. Մ. Խաչատրեանի, Ա. Ա. Ղազինեանի, Երեւան, 1985, էջ 341:

⁴⁷ Տէս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Թ, խմբգր. Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, էջ 387: Այս աղբիւրը յուշելու համար շնորհակալութիւն ենք յայտնում պ. գ. թ. Վահէ Թորոսեանին եւ պ. գ. դ. Գէորգ Տէր-Վարդանեանին:

⁴⁸ Հ. ՂԵՌՈՆԻ ՎՐԴ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան: Համագրութիւն հայկական Կրիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ—Ս. Ղազար, 1885, էջ 74:

⁴⁹ Հայութեան հոգեւոր այս կենտրոններին տարատեսակ նուիրատուութիւնների փաստերը շատ են: Օրինակ՝ Խոջա Պետրոսի խոշոր մի նուիրատուութեան եւ Գէորգ Մանուկի ժառանգութեան բաշխման մասին տես «History of the Armenians in India», էջ 145, 132:

վարագոյրի վրայ եղած նաւն իր մէջ կարող էր ամբարել հնդկահայոց տնտեսաքաղաքական հաւաքական բարդ կացութեան նկարագիրը, յատկապէս երբ ԺԸ. դարի վերջերից հայերի տնտեսական վիճակը փոխուում է: Այդ է պատճառը, որ Մադրասից որոշ ջուղայեցիներ ազգային պետութեան ստեղծման տեսլականով փորձեցին վերակազմակերպուել⁵⁰:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Մովսէս Յարութիւնեանի նուիրաբերած վարագոյրն իր պատկերագրութեամբ բացառիկ է, քանի որ նրանում եղած առեւտրական նաւը Հայոց Եկեղեցու ընդհանուր պատկերագրութեան մէջ անսովոր երեւոյթ է: Վարագոյրի վրայ պատկերուած երկու սիւները, չորս աւետարանիչների պատկերները, ձուածեւ շրջանակների մէջ առնուած չորս սուրբ պատկերները եւ համաժամանակեայ լուսաւորող երկնային լուսատուներն աստուածաբանական տեսանկիւնից ունեն շատ տրամաբանուած կապ եւ խորհրդաբանութիւն: Ինչ վերաբերում է նաւին, ապա այն, ամենայն հաւանականութեամբ, ուղիղ առնչուել է Մովսէս Յարութիւնեանին: Վերը նշուած միջադէպից յետոյ նա գուցէ որոշել է անմահացնել նաւի պատկերը սրբազան խորանում՝ հաւանաբար ակնկալելով դրական փոփոխութիւն կամ պարզապէս յիշատակի անմահացում: Իսկ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը նման բովանդակութեամբ նուէր ընդունել է, քանի որ առհասարակ նաւի խորհուրդը քրիստոնէութեան տեսանկիւնից բացատրելի է. այն խորհրդանշում է Քրիստոսի Եկեղեցին՝ փրկութեան նոր տապանը: Չի բացառում նաեւ, որ վարագոյրն ընդունուել է, քանի որ այն, բացի Մովսէս Յարութիւնեանին առնչուող անձնական պատմութիւնից, խորհրդանշել է հնդկահայոց տնտեսաքաղաքական ընդհանուր բարդ իրավիճակը, որը չէր կարող փոխկապակցուած չլինել Հայոց Եկեղեցու հետ:

РЕЗЮМЕ

В этой статье обсуждается иконография уникального занавеса алтаря, подаренного Мовсесом Арутюняном, армянином из Индии, Кафедральному Собору Святого Иакова в Иерусалиме в 1818 году. Занавес необычный, поскольку

⁵⁰ S. D. ASLANIAN, *Julfan Merchants and European East India Companies*, (Mapping Safavid Iran, edited by Nobuaki Kondo), Tokyo, 2015, p. 221.



Վարազդյրի չափերն են՝ 7,02 x 5,11 մ: Լսնկ.՝ արտասպումած Hali, Issue 46, August, 1989, էջ 15:



Հատում 1800 թ. Հնդկաստանում ստեղծում վարագորից,
ՀՊԹ, Ա.1985:

Հայկական զինանշանով պատառ, ԺԹ. դարի առաջին կես,
Վիեննայի Մխիթարեան միաբանության թանգարան:



он единственный, на котором изображено британское торговое судно с изображениями, относящимися к христианству. Была сделана попытка объяснить общий контекст этих изображений и икон, найденных на занавесе алтаря. Высказывается и обсуждается гипотеза о том, что даритель, г-н Мовсес, был связан с этим торговым судном, изображенным на занавесе, и церковь приняла подарок с этим странным изображением, поскольку судно является символом церкви в христианстве, и по другим причинам, обсуждаемым в этой статье.

SUMMARY

This article discusses the iconography of a unique altar curtain donated by Movses Harootunian, an Indian-Armenian, to the Cathedral of Saint James in Jerusalem in 1818. The curtain is extraordinary as it is the only one depicting a British merchant ship with images related to Christianity. An attempt is made to explain the general context of the icons and images found on the altar curtain. A hypothesis is set forth and discussed that the donor, Mr. Movses, was involved with the merchant ship depicted on the curtain, and the church accepted a gift with that strange image since the ship is a symbol of the church in Christianity and for other reasons discussed in this article.

